ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության փորձագետ էլինար Ավետիսյանի 16.10.2019 թ.-31.01.2020 թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն

1. Նշյալ ժամանակահատվածում ստացել եմ շուրջ 160 մտից գրություն՝ դահլիճների վարձակալման նամակներ, դիմում-բողոքներ, մի շարք բովանդակային հաշվետվություններ, պայմանագրեր, հրամաններ, պատրաստել եմ 120 ելից գրություն և փաթեթ, արխիվացրել շուրջ 50 փաթեթ, հրամաններ և նյութեր:
2. Ամփոփել եմ 2019թ. 9 ամսվա և տարեկան հաշվետվությունները և ոչ ֆինանսական ցուցանիշները, ուսումնասիրել, պատրաստել և համապատասխանաբար տրամադրել եմ եզրակացություններ:
3. Հավաքագրել եմ պետական թատրոնների խաղացանկերը:
4. Կատարել եմ 2020 թ. հունվար ամսին ՊՈԱԿ-ների տարեկան դրամաշնորհային սուբսիդիայի «կատարողը պարտավոր է» կետի և դրան հարող ենթակետերի մշակում, պատրաստում և նույն փաստաթղթին կից 2 հավելվածների ոչ ֆինանսական ցուցանիշների գրանցում և տրամադրում մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչությանը:
5. Իմ իրավասության սահմաններում մասնակցել եմ թատրոնի տնօրենի քննության քարտուղարության աշխատանքներին:
6. Կատարել եմ ընդունման-հանձնման ակտերին հարող տարաբնույթ գործառույթների իրականացում (ավելի քան 40 եզրակացությունների պատրաստում, կատարողին ստորագրմանը ներկայացում):
7. Նախաձեռնել և իրականացրել եմ կիսատ հաշվետվությունների ամբողջական նյութերի հավաքագրում, պատրաստվել է պայմանագրերի ժամկետների խախտման 10-ից ավելի գրություններ:
8. Մասնակցել եմ Ոլորտում իրականացող բեմադրությունների հանձնումներին և առաջնախաղերին, մամուլի ասուլիսներին:
9. Կազմել եմ թատերարվեստի ոլորտի ՊՈԱԿ-ների ստեղծագործական գործունեության 2020 թվականի ոչ ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն:

10. Իմ իրավասությունների սահմաններում մասնակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի գործընթացի իրականացմանը «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» հանձնաժողովի կազմում՝ որպես քարտուղար:
11. Նախարարության կայքում տեղադրելու համար՝ համակարգող նախարարի տեղակալին պարբերաբար ներկայացրել եմ Ոլորտի ստեղծագործական ծրագրերի, միջոցառումների վերաբերյալ տեղեկույթներ:
12. Հավաքագրել և տրամադրել եմ ՊՈԱԿ-ներից պահանջվող մի շարք իրավական փաստաթղթեր:
13. Կազմել եմ Վարչության ամենամսյա տաբելը:
14. Վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ: